

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 19 ՄԱՐՏ, 1932

ԹԻԻ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մեր Դիրքը

Տ. ձ. Խ.

Քրիստոս և Հրեաները

Տ. ձ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Տր. Լ. Օ. Լի

ՏՐ. ձ. Է. ՄԵՐԻԼ

Մեկ ընդհանրական սկեղեցի

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

Յովսէփ Կաթողիկոս Հոռոցիմցի

ՌՇՏՈՒՆԻ

Օրորոցը կարն և կալ

Ս. Գ. ՍԻԻԼԱՀԵԱՆ

Դիսական Քրոնիկ

ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Ձեռնարկ Մը

ԵՐՈՒԱՆԴ Լ. ԱՂԷԿԵԱՆ

Ճաբոնցի և Զիւնցի

ԱՄՓ. Տ. ձ. Խ.

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ԸՈՒԹ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, օտարերէն բաժնեգրեցն է 150 շրջաւոր։ Սուրբոյ համար, և մէկ աւել տուար՝ արիւ ըստը երկիրներու համար։

Յօդուածներու բնագիրները չեն շրջակուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ։ չհրատարակուող յօդուածներու համար պէտք է շրջել փոստի ծախսը։

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեղանով, դիւրբնթեանս ժամանակը կերպով։

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐԻ ԿԸ ՆՈՒՐԷ

Հալէպի էմանուէլ Հայ Աւետ. եկեղեցիի Ե. Բ. Զ. Ընկերութիւնը հետեւեալ հասցէներուն, մէկ տարուան համար։

Հալէպ՝ Մէյտան Թաղի Աւետ. եկեղեցիին

Մամլթէյնի Հայ Թոքախտանոցին
Համանայի Ամերիկեան Թոքախտանոցին։

ՍՏԱՑԱՆՔ

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ անուն հրատարակութեան Բ. հատորին 12 թիւերը, 13-24, և ՍՍՍՄՍՅ ՆՈՒՆԵՐԸ, Հրատարակիչն է «Սահակ Մեսրոպ» տըպագրատունը, Գահրէ, 25 Sharia Tewfik.

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՅՑ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԷՆ, գինն է 5 Ե. Դ. լոյս տեսած Սահակ Մեսրոպ տպարանէն։

ԿԱՆԹԵՂ, Գրական, Գիտական և Գեղարուեստական ամսաթերթի Ա. տարուան առաջին թիւը, Տարեկան բաժնեգրինն է Սիւրիոյ և Ֆրանսոյի համար 1 տուար։

Հասցէ. — Avedis Etmekdjian Imp-
rimerie Arax, Rue Tilel, Alep Syrie.

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է։ Այս կէտը նկատի առնելով «Նոր Աւետարեւոր» խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 25 իրական պատմութիւններ և պատմուածքներ։ Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն։ Գինն է 25 շրջ. սուրիական կամ 50 սէնթ (Ամերիկայի Եգիպտոսի համար)։ Դիմել խմբագրութեան հասցէին։

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՐԻՆ ՆՈՒՐԱՄԵՆ

1931 Յուլ. 28—1932 Փետր. 15 Մի-
ջոցին

Տիար Գէորգ Պէյլէրեան 1 Եգ. Թւի, «Րահնիւմ» ժիշոցաւ թիւ 9, 1931, 3 տուար, Բէսապի եկեղեցի 1 տակ, Այնթապի Հայրենակցական Միութիւն 18.75 սուրի. շրջ.։ Հաճի խաթուն Բիւրքեան 20 շրջ. արծաթ ընթացիկ Վիոն և շրջակայ եկեղեցիք մէկ դրիւ և 170 Փրանգ, Մասիս եկեղեցիի կիները (Լոս Անկէլէս) 10 տուար, Պէյրութի Աւետ. եկեղեցին 100 շրջ. սուրի։

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Բնիկ Կեսարացի Բիւրքեան Գաղանճըեան Աւետիս աղայի զաւակները Արահատ և Յակոբ կը փնտռուին Հալէպի ազգականներուն կողմէ։ Կը խնդրուի անոնց հասցէները իմացնել խմբագրութեան։

ՄԻԷՏԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 19 ՄԱՐՏ, 1932

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՄԵՐ ԴԻՐՔԸ

Ամէն տեսակ նորութիւններու գործակալներով շրջապատուած ենք այսօր: Գիտական նոր տեսութիւններ, ընկերային նոր վարկածներ, ընտանիքի ձեւին մասին նոր թելադրութիւններ, տնտեսական կեանքի նոր պայմաններ, այլազան և յաճախ այլանդակ կրօնական գաղափարներ, նոր աստուածաբանութիւն, նոր կրթական դրութիւններ, կեանքը և ներկայ դարը մեքենական դարձնող նոր մեքենաներ և գործիքներ հրապարակի վրայ դրուած են: Նորութիւններու այս քառասին մէջ շիտակ ճամբայ մը գտնել՝ կը պահանջէ անվեհերութիւն և իմաստութիւն:

Կան մարդիկ՝ որոնք իրենց հոգիին դուռերը ամուր փակած են ամէն կերպ նորութիւններու դէմ: Անոնք չեն ուզեր լսել և կարգաւ գիտական, ընկերային և կրօնական նոր ծանօթութիւններու և գաղափարներու մասին, վախնալով որ այդպէս ընելով կը վտանգեն իրենց իմացական և հոգեւոր կեանքին խաղաղութիւնն ու զօրացումը: Ասանց կարծիքով անցեալին մէջ խանձաբուրուած է գաղափարական կեանքը,

իր ամէն գեղեցկութիւններովն ու բարութիւններովը: Հին քաջերը, հին սուրբերը, հին գիտունները, հին քարոզիչները, հին պայմաններն ու սովորութիւնները աւելի մեծ և իրական արժէք մ'ունին, մասնաւոր հմայք մ'ունին անոնց համար, որոնց աչքը միշտ դէպ ի հոռւ դղուած է: Ասոնք ամէն տեղ և կեանքի ամէն մարդին մէջ կը կազմեն առաւել կամ նուազ չափով պահպանողական, աւանդապաշտ, ազգայնական կոչուածներու բանակը: Այս դասակարգը կարեւոր պաշտօն մը կը կատարէ անցեալէն ժառանգ մնացած և տեական արժէք ունեցող գանձը անվերթաբար պահելով: Բայց ապոնք մեծ փորձութիւնն կամ վտանգն է իրենց ատենին միայն արժէք ունեցող, կամ բոլորովին անարժէք և նոյնիսկ փաստակար հին սովորութիւնները, գաղափարները իբր բացարձակ ճշմարտութիւն, և կամ միայն իրենց պատկանած ըլլալուն համար պաշտումի եւ գուրգուրանքի առարկայ ընել: Այսպէս, այս մարդիկ անցեալ կեանքի գոհարները անոր ազան ու մրուրովը խառնուած կը փոխանցեն նոր սերունդին:

կան երկրորդ դասակարգէ մարդիկ ալ՝ որոնք միշտ բաց սիրտ մը կը պահեն ամէն տեսակ նորութիւններու հանդէպ։ Ասանց համար գրեթէ արժէք չունի ինչ որ հին է։ Ասոնք նորոյթի սիրահարներն են։ Փչող ամէն նոր հովին առաջատար կը բանան։ Սիրով կը հիւրընկալեն ամէն նոր գաղափար, նոր ձև, նոր սովորութիւն։ Դիւրութեամբ կ'ընտելանան կը յարմարին ամէն նոր պայմանին։

Այս դասակարգը ես կարեւոր պաշտօն մը կը կատարէ ցուցնելով թէ նոր ձևով, նոր ըմբռնումով կեանք մ'ալ կարելի է ապրիլ՝ որ կրնայ մեծ արժէք ներկայացնել, և թէ ներկայ կեանքը մաքրելով շատ մը անարժէք բեռերէ, փտութիւն պատճառող սովորութիւններէ և մահաբոյր ըմբռնումներէ, Բայց ասանց մեծագոյն վտանգն է կեանքը ընել անհաստատ, անորոշ, անապահով եւ միեւնոյն ստեն կորուստի մատնել անգին զոհողութեամբ ատացուած եւ պահուած և տեական արժէք ունեցող ընկերային ժառանգը, կրօնական, ընկերային գաղափարներն ու սովորութիւնները։

Այս երկու դասակարգէ մարդոց ալ դիրքը շիտակ չէ։ Այն կեանքը որ զուրկ

է անցեալի հիմէն խախտու է, իսկ այն որ զուրկ է նորի թարմացուցիչ լրացուցիչ տարրէն անդամալոյծ է։ Սխալ է խորհիլ թէ ունէ գաղափար, կամ սովորութիւն, ունէ հաստատութիւն կամ կեանք արժէք ունի՝ պարզապէս անոր համար որ ան հին է կամ նոր, անցեալի կը նայի կամ ապագայի։ Բոլոր արժեքներու հանդէպ պէտք է ունենալ քննական ուժի եւ ընտրողական դիրքի։ Անցեալի ժառանգէն պէտք է ընտրելով պահել մեր արդի կեանքին մէջ այն բոլորը որ տեական արժէք ունին, թանգարանի դարակները պէտք է զարգարել անոնցմով որ իրենց այժմեական արժէքը կորսնցուցած են։ Եւ միւս կողմէն մեր կեանքը միշտ պէտք է ճոխացնել, թարմացնել, լրացնել, բարձրացնել այն բոլոր նորութիւններով որոնք շինիչ են, իրական արժէք ունին, անհրաժեշտ այժմեական պէտք մը կը գոհացնեն, իսկ պէտք է դէն չպրտել զանոնք որ խաբուսիկ են ու թուեաւոր։ Այս քընտրական ընտրութիւնը կատարելու համար մեր բացարձակ չափանիշն է Քրիստոս, յաւիտեական Նորը, որ անսպառելի դանձեր կը պարունակէ մեզի համար։

Տ. Զ. Խ.

ՀՐԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

Քսան դարեր առաջ Հրեայ եկեղեցին Յիսուսի մասին պաշտօնական վճիռը տուած էր, որ այնքան աղէտալի եղաւ այդ ազգին համար։ Այսօրուան Հրեաները, սակայն, իրենք գիրենք պարտադրուած կ'զգան այդ վճիռը սրբագրելու, իրենք գիրենք հարկադրանքի տակ կը գտնեն Յիսուսի հանդէպ իրենց դիրքը վերաճչելու։ Ընդհանուր զըժգոհութիւն մը ծայր տուած է անոնց մէջ, հոգեւոր քաղց մը կը տանջէ Հրեաութիւնը, որ ա'լ զուրկ կը գտնէ զայն

գոհացնելու համար Մովսիսականութեան դիմելու աւանդական ջանքերը։

Բալֆ Բ. Հիքսը, կանանց Ուէսթլըն Գոլէճի նախագահը, Թիք Բրիսլըն Էմիլֆիշըն պարբերաթերթին մէջ յօդուածի նիւթը բաց է Հրեաներու դիրքը Յիսուսի հանդէպ, և 1895-1927ի միջոցին Հրեայ մեծ հեղինակներու կողմէ կրուած բազմաթիւ գիրքերու և յօդուածներու մէջէն ընտրուած մօտ 12էն մէջը բերումներ ընելով կը ցուցնէ՝ թէ Հրեայ նոր գրողներու գիրքը որչափ բարեկամա-

կան և զնահատական է: Միայն մէկը, Կէրկ Պրանտէս, Յիսուսը առասպել մը կը նկատէ, որ սակայն խիստ քննադատութեան արժանացած է «Թհը Ճիսուի ինսիքլոփէտիա»-ի մէջ:

Կ'արժէ ասոնցմէ մի քանի կարճ տողեր յիշել հոս:

Դիտ Կ. Մոնթէֆորը, նշանանոր անգլիական Հրեայ մը, «Հին Կտակարանը և Ետքը» (1923) անուն գրքին մէջ կ'ըսէ. «... Նոր Կտակարանի մէջ այնպիսի գեղեցկութիւններ և բարձր արժէքներ կը գտնենք որ Հին Կտակարանինները կը լրացնեն և կը յառաջացնեն... Ուրեմն մեզի պէտք եղած Հրեական կրօնքէն աւելի աղքատ մէկը պահելու մէջ չյամառինք: Ինչու՞ մեր կրօնքը կարելի եղածին չափ չհարստացնենք: Յիսուս և Պօղոս մեզի կրնան այնքան օգնել որքան Հիւլէ և Աքիլա: Ինչ բարիք որ անոնք ունին նաև Աստուծոյ հկած է:»

Հ. Ճ. Ինիլօ, Նիւ Եորքի էմմանուէլ Տաճարին Րաբբին, «Յիսուս հրեական աջոյ» (1920) գրքին մէջ ըսելէ ետքը՝ թէ Յիսուսի Թագաւորութիւնը հոգեւոր էր՝ կը շարունակէ. «Ո՞վ կրնայ զնահատել, հաշուել այն բոլորը զոր Յիսուս մարդկութեան ըսել ուզեց: Իր ներշնչած սէքը, տուած միսթարութիւնը, յառաջ բերած բարիքը, իր արժարձած յոյսն ու ուրախութիւնը մարդկային պատմութեան մէջ եզակի մնացած են: Մարդկային ցեղի արտադրած մեծերուն և բարիներուն ոչ մէկը կրցած է Յիսուսի նոյնիսկ մօտենալ տիեզերական ազդեցութեան տեսակէտէ: ... Հրեան չի կրնար չհպարտանալ այն բանով զոր Յիսուս աշխարհին տալ ուզած է՝ ան նաև չի կրնար չյուսալ թէ Յիսուս կրնայ Հրեայի և քրիստոնեայի միջեւ միութեան կապ մը ըլլալ, եթէ անգամ մը անոր վարդապետութիւնը աւելի լաւ ճանչցուի և թիւրիմացութեան մահացու վտանգը եթէ

վերջապէս անոր խօսքերուն և իտէալներուն վրայէն վերցուի:»

Քլաւսնըր իր «Նագովրեցի Յիսուս» գրքին մէջ կ'ըսէ. «Իր (Յիսուսի) բարոյական օրէնքները՝ ուրիշներէ տարբերութեան մէջ այնպիսի վեհութիւն մը և ձեւի ինքնատպութիւն մը ունին որոնց երբեք չեն հաւասարիր երբայական ուրիշ ուէ բարոյական օրինադիրք մը:» Իսկ Հրեայ նշանաւոր պատմաբան Հայնրիխ Կրէյց 11 հատորներէ բաղկացած «Հրեից Պատմութիւնը» զըրքին Յիսուսի մասին եզոզ Բ. հատորի Դ. գլխուն մէջ կ'ըսէ՝ թէ «Յիսուս թեւեւ թիւրիմացութեան մը զոհ զնաց» և այս «մէկ դատապարտութիւնը միւս տառապանքի պատճառ եղաւ:» «Առանց չափազանցելու կրնանք ըսել թէ (Յիսուս) միակն է որուն մահը կեանքէն աւելի ազդեցիկ եղաւ:»

Ասոնք, բոլորն ալ, քրիստոնեայ չեն, եւ Յիսուսը քրիստոնեաներու ընդունած իմաստով չեն ընդունիր: Բայց այս չոր ազատամիտ հրեականութիւնն եւս զոհացում չի տար այս ազգին հոգեւոր կարօտութեան: Եւ շարժում մը սկսած է դէպի քրիստոնէութիւն:

Արթըր Միքլալըն, նորագոյժ Հրեայ օրէնագէտ մը, որ երկու տարիներէ ի վեր Հրեաներու մէջ աւետարանչական գործով կ'զբաղի, իր մէկ քարոզին մէջ կը յիշէ հետեւեալը:

«Հրեաներու աչքերը դէպի Յիսուս սկսած են դառնալ: Պատերազմէ ասդին հազարաւոր Հրեաներ Յիսուսը իրր իրենց Փրկիչը ընդունած են: Հաւեգարիոյ մէջ արթնութիւն մը յառաջ եկաւ և 97000 Հրեաներ Յիսուսը իրր իրենց Մեսիան (Քրիստոս) բնորոշեցին: Աւստրիոյ և Գերմանիոյ մէջ 50000, Ռուսիոյ, Փոլոնիոյ, Լիթուանիոյ, Ուքրանիոյ մէջ 230000 և Ամերիկայի մէջ 100000 Հրեաներ քրիստոնեայ եղան: Ներկայիս աշխարհի վրայ մէկ միլիոն

ՏՐ. Լ. Օ. ԼԻ

Գրեց՝ ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

(Շատ ևս Վերջ)

ՏՐ. Լիի կեանքը շատ յայտնի կերպով իմացական էր։ Անոր միտքը միշտ կը գործէր։ Եւ անիկա կ'աշխատէր որ իր աշակերտներն ալ գործօն բայց անկախ և անսխալ իմացական կեանք մ'ունենան։ Անոր նշանաբանն էր «ճշդութիւնը իմացական պարկեշտութիւնն է» քսուքը, զոր անգամ մը դասարանի մէջ սե տախտակի վրայ գրած էր։

ՏՐ. Լի շատ գիրք կը կարդար։ Ճեմարանի գրադարանը իր ծանօթութեան և իմաստուն ընտրութեան մէկ կոթողն է։ Առանց գիրքի գրեթէ չէր ճամբորդեր։

Այսպիսի իմացականութեամբ օժտուած ուսուցիչէ մը կ'աշխատէր որ իր ուսուցումը գրգռներով և նոր գաղափարներով լեցուն ըլլար։ Անիկայ միշտ նոր գաղափարներ կը յղանար։ Սրձակուրդի տարիներուն երբ Ամերիկա երթար՝ նոր բանով մը գործի գաշալը կը վերադառնար։ Այսպէս, տարի մը Ս. Գրային Աստուածաբանութիւնը, երկրորդ անգամուն ընկերաբանութիւնը, երրորդ արձակուրդէն վերադարձին նոր կրթութեան մասին մեծ հետաքրքրութիւնը հետը բերաւ։

1930ի Սեպտեմբերին Գր ուսումնաւարտներէն մէկը իրեն գրած մէկ նա-

մակին մէջ կ'ըսէր. «Անկարելի է մոռնալ այն դասերը զոր դուն այնքան ուշադրութեամբ մեզի ուսուցիր, — ճշգրտահոսութեան կարեւորութիւնը, մշտածունդութեան մէջ հաւասարակշռութիւն, անաչառ դատողութիւն, ամփոփ բայց լեցուն արտայայտութիւն, ֆիզիքական մարզանք, լայնամտութիւն, ճշմարտութիւնը մեր պայմաններուն յարմարեցնել։ Ես ուրախութեամբ կը յիշեմ որ դուն այս դասերը ոչ միայն խօսքով այլ նաեւ կեանքովդ մեզի սորվեցուցիր։»

ՏՐ. Ֆ. Ու Մէքսըրմ 1930ի Աշնան գրած մէկ նամակին մէջ կ'ըսէ.

«ՏՐ. Լիի միջոցաւ ես 1894ին հրաւիրուեցայ էրգրումէն Մարալ երթալու ուր՝ Ճեմարանի մէջ՝ Նոր Կտակարանի ճիւղը պէտք էի դասաւանդել։ Իմ հոն գտնուած 17 տարիներուս միջոցին ՏՐ. Լի իմ միակ Ամերիկացի գործակիցն էր։ Հետեւաբար անոր հետ յարաբերութիւններս շատ մտերմական էին։

«Ես միշտ երախտապարտ եղած եմ որ այսպիսի կարող մէկուն մը գործակցութեամբ ուսուցանելու առիթը ունեցած եմ։

«Շատ չանցած գոյայ որ Ճեմարանը իր բարձր աստիճանին հասեր էր ՏՐ. Լիի ջանքերուն ջնջման։ Անիկայ միշտ կ'աշխատէր որ Ճեմարանը իր առաջին ծրագրով և ուսուցումի մեթոտներով Ամերիկայի լաւագոյն օգեմիտարներուն հաւասարէր։»

«... ՏՐ. Լի իբր ուսուցիչ նշանաւոր մէկն էր։ ... Աշակերտները ան-

Հրեաներ կան որ Յիսուսը վը պաշտեն։ Կ'ըսէ որ ՏՐ. Միքըլըն կ'ըսէ Գրիստոնեայ եկեղեցիին համար մեծ պատեհութիւն մը կայ գործելու, և ժամանակները երբեք այսքան հասուն չեն եղած Հրեաները Բրիտանիոյ բերելու։

կախ խուզարկութեան և իրենք իրենց համար խորհելու սովորութեան կ'առաջնորդէր: ...Աշակերտները լաւագոյն գիրքերը կարգալու սիրով տողորուած Ճեմարանէն դուրս կ'ելլէին: ...Բարեբախտաբար Մերձաւոր Արեւելքի մէջ թերեւ լաւագոյն աստուածաբանական գրադարանը ունէինք: ...Բայց կարգալու սովորութիւնը այնքան հաստատուած էր անոնց մէջ որ ան իրենց բոլոր կեանքին մէջ շարունակեց, և անոնց բոլորն ալ միշտ իրենց սեպհական գրադարաններուն համար, իրենց կարելի եղած չափով գիրքեր կ'առնէին:

«... Ես գիտեմ որ ասանդները դասարանի մէջ ժամ մը պնդր քովը մնալէ ետքը երեսներ վրայ իմացական գրգռումի կատարեալ փայլով մը, կամյաճախ խոր հոգեւոր փորձառութեան ազդեցութեան տակ դուրս կ'ելլէին:

«Անիկայ Ս. Գիրքի կատարեալ մէկ մեկնիչն էր, և իր աշակերտներուն քարոզչի բարձրագոյն գաղափարականը կը ներկայացնէր: Ան միշտ նոր գաղափարներ կ'առաջադրէր:

«Տր. Լի՝ Թուրքիոյ մէջ Պարտի ծառայող միսիոնարներուն ամէնէն արդիւնաւոր եղողներէն մէկն էր:»

ՄԷԿ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Եփեսոս. Դ. 3—6

Առաքելական Հանգանակին վերջին պարբերութեան մէջ կ'ըսուի. «Կը հաւատամ Ընդհանրական Սուրբ Եկեղեցւոյն, Սուրբերու հաղարդակցութեանը:»

Ներկայիս գոհանալիք կարեւոր բաներէն մէկը սա է որ Քրիստ. Եկեղեցւոյ զանազան ճիւղերուն միջև գէպի աւելի մօտ յարաբերութիւն և գէպի միութիւն փափաք և շարժում մը կ'երեւի: Իսկապէս, ինչպէս Աստուած մէկ և Քրիստոս մէկ է, եկեղեցին ալ պէտք է որ մէկ ըլլայ: Մեր Տէրն իր ժառանգած գիշերը մատուցած Քահանայապետական մեծ աղօթքին մէջ կ'ըսէ. «Որպէսզի ամէնն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն, ո՞վ Հայր, իմ մէջն՝ ու ես քու մէջդ. որպէսզի աշխարհ հաւատայ թէ դուն Ղրկեցիր զիս:» (Թովհ. Ժէ. 21): Թէ ինչո՞ւ բոլոր աշխարհ Աւետարանին չի հաւատար, զիստոր պատճառներէն մէկը սա է որ Քրիստ. Եկեղեցին իրարու հակառակ գործող յարանաւանութեանց և աղանդներու բաժնուած է: Իսկ այս

խիստ պիտի օգտուի և ոգրալի վիճակ մըն է:

Նախ Յիսուս Քրիստոսի անձին մէջ Աստուածութեան ու մարդկային բնութեան ինչպէս միացած ըլլալուն մասին վիճաբանութեանց երեսէն եկեղեցին բաժնուեցաւ կաթոլիկ, Օրթոդոքս, Նիստորական, Հայ, Ասորի, և այլ անուններով ճիւղերու: Երեսք գարեկով զիրարատեցին ու հալածեցին և եղբայրասպան կոչուով իրարու արիւնք թափեցին, մինչ զիրենք շրջապատող հեթանոս ու կապալաշտ ժողովուրդներուն Աւետարանի բերուիլը զանց կ'ընէին: Յետոյ, Բարեկարգութիւնէն ետքը, Բողոքական Եկեղեցւոյ առաջնորդները մկրտութեան ու հաղորդութեան ինչպէս կատարուելուն, եկեղեցական վարչութեան կերպին և արձնցնման խիստ երկրորդական պարիմանէ բաժնորդ համար իրարու հետ վիճելով զատուեցան, և Բողոքականութիւնը շարունակ բաժանուելով, այսօր առնուազն 200, գուցէ աւելի ալ յարանաւանութիւններու վերածուած է, որոնք պարզապէս

իրարու հակառակ գործելու կերպով կը վատեն իրենց զրամներն ու զօրութիւնը, մինչ անդին թէ միայն աշխարհ դէպի կորուստ կը դիմէ, հապա նոյնիսկ եկեղեցւոյն մէջ կեանքն օրէ օր կը հիւծի կը մեռնի:

Այս պատճառաւ, զոր օրինակ Մր. Մուտիի պէս մեծ արթնութեանց աւետարանիչ մը, յաջողութեան իր նախապայման կը պահանջէր ու եկեղեցիներ և յարանուանութիւններ միարանին ու գործակցին: Հիմա Աւետ. Եկեղեցիներու առաջնորդներն ալ սկսած են տեսնել թէ այս բաժան բաժան ըլլալը ո՞րչափ սխալ ու վնասակար է. ուստի կը ջանան դէպի միարանութիւն քայլեր առնելու: 1927 տարւոյ միջոցին Լոզան գումարուած Եկեղ. Համաժողովն ասոր մէկ գեղեցիկ ու գործնական արտայայտութիւնն էր և ամէն ճշմարիտ հաւատացեալը յոյսով և ուրախութեամբ լիցնելու գէպք մը:

Միայն թէ ինչպէս նոյն համաժողովին մէջ բացորոշ արտայայտուեցաւ, եկեղեցիներն արտաքինապէս միութեան բերելու ջանքը զուր է. անկարելի է այս և անօգուտ ալ: Հետեւաբար, իրենց յօժար կամքով միանալ ու զոգ ժողովուրդներն ալ եկեղեցիները հաւնելով ու քաջալերելով հանդերձ, ամէն եկեղեցի իր կամքին ու ընտրութեան մէջ ազատ ձգել և միայն անոնց մէջ հաշտութեան, սիրոյ և գործակցութեան գոյանալուն աշխատիլ ամէնէն ապահով ճամբան է: Պէտք է թողուլ որ միութիւնը, փոխանակ բռնի և չինծու ըլլալու, «Հոգւոյն միարանութիւն» ըլլայ «խաղաղութեան կապովը»: Ինչպէս 1928 տարւոյ ազօթքի հօթնեակին նիւթերուն մէջ ըստուած էր, «Թէ արտաքին, այլ ներքին աւհագեւոր միութիւն փնտռելու համար եղող որոշ փափաքին մասին» Աստուծոյ փառք տալ կ'արժէ: Նոյնպէս «այս ընդհա-

նուր տենջանքին ի սէր բազմաթիւ անհատներու և եկեղեցիներու յանձնառած զոհողութիւններուն համար» որչափ գոհութիւն մատուցուի Աստուծոյ, յարմարութիւն առնի:

Ինչու՞ եկեղեցիներու միութեան համար այս փափաքն ու ջանքը շուտով չ'արդիւնաւորուիր: Քանզի աղեղնեկան առջեւը: Ամենամեծ արգելքը իրական սիրոյ պակասութիւնն է: Իրական սէրը անկեղծ է, որ թէ՛ կը վստահի զիմացիին, թէ՛ ալ անոր վստահութիւնը չահելու արժանաւոր կացութիւն մը կ'ունենայ, Անկեղծութիւն և փօխադարձ վստահութիւն հիմունքն են ճշմարիտ սիրոյ: Դարձեալ, սէրը «չի բնէր չի փնտռեր». անձնական շահը փնտռել կամ ամէն մարդ կրակը իրեն առջեւը քաշելը չի կրնար սիրոյ հետ հաշտ ընթանալ: Սէրը անշահախնդրութիւն կը պահանջէ: Նոյնպէս, թէր «չի գոռոզանար, չի հպարտանար». հպարտութեան և ինքնահաւանութեան երեսէն, ոչ թէ սէր, այլ հակառակութիւն և ատելութիւն յառաջ կ'առնայ: Ուստի հեղ և սրտով խոնարհ ըլլալը մեր Փրկչէն սորվելին ապայման մըն է փափաքուած այս միութեան օր առաջ իրականանալուն:

Ուրիշ արգելք մըն ալ ունի անհաս կամ հստակ չոյ իր նպատակահետքերէն զոհողութիւնը, որ ինչն երբեք նպատակակէտները բնաւ նկատի չ'առնիր, հետեւաբար իր նպատակակէտին յաջութանակը կը փնտռէ ուրիշներու նպատակակէտներուն պարտութեան մէջ: Մինչդեռ կարելի էր քրիստոնէական կեանքի մէջ տարբեր նպատակակէտներն իրարու հետ հաշտեցնել և ներդաշնակութեան բերել: Եթէ միմիայն Յիսուսը ճանչնանք իբրեւ եկեղեցիին Գլուխը, եթէ ամէն մէկս ինքզինքնիս Ասոր մարմնոյն իբրեւ մէկ անդամը նկատենք և մէկ Գլխու հպատակինք, եթէ մեր

նպատակակէտներն ալ լուկ գինքը փառաւորելու ուղղուած ըլլան, այն ատեն իրարմէ քիչ թէ շատ տարբեր նպատակակէտներ հետապնդելնիս այնչսփ վրնաս չ'ըներ, քանի որ անոնք կրնան իրարու լրացուցիչներ ըլլալ: «Վասնզի ոչ թէ անձերնիս կը քարոզենք» կ'ըսէ առաքեալը, հապա Յիսուս Քրիստոս Տէրը» (Բ. Կորն. Դ. 5). և ճիշդ ասոր համար ալ ամէն մէկս կրնայ ինքզինքն ուրիշներուն ծառան ընել. այսինքն՝ Քրիստոսի փառքին, ընդհանուրի օգտին և եղբայրներս շինութեան սիրոյն կրնանք մեր շատ մը պահանջումներէն և իրաւունքներէն հրաժարիլ:

Բայց եթէ եկեղեցի մը կամ համայնք մը, փոխանակ Տէր Յիսուս Քրիստոսը քարոզելու՝ ինքզինք կը քարոզէ, իր շահը կամ պահանջները յառաջ կը քէ, և կամ եթէ թլփատութիւն կամ շարժապահուծիւն կը քարոզէ, պահք և պատարագ կը քարոզէ, լիզու և ազութիւն կը քարոզէ, մկրտութիւններ կը քարոզէ, փրկիստփայտութիւն կը քարոզէ, բարեշնչութիւն և բարձրագոյն քննադատութիւն կը քարոզէ, սոսկ բարոյախօսութիւն և ընկերական բաբելաւութիւն կը քարոզէ, արդէն այգպիսիներուն հետ միանալ ու միաբանիլ նշանակութիւն ալ չ'ունի. որովհետեւ եկեղեցւոյ միութեան մէջ անհրաժեշտ պայմանն է Քրիստոսի փառաւորութիւնը, այսինքն՝ հոգիներու փրկութեան համար Քրիստոսի խաչին քարոզութիւնը: Վասնզի երբ կ'ըսենք թէ «կը հաւատամ մէկ ընդհանրական եկեղեցւոյ», ըսել կ'ուզենք որ «կը հաւատամ մէկ եկեղեցւոյ՝ որուն Գլուխը Քրիստոսն է»: Կազմակերպութիւն մը՝ որուն գլուխը Քրիստոսն է, եկեղեցի չէ:

Մէկ կողմէն Պօղոս ու Բառնաբաս և միւս մողմէն Յակոբոս, Կեփաս և Յովհաննէս կրնան հաղորդակցութեան աջ

ձեռք տալ իրարու և մէկ կողմը կրնայ անթլփատներուն երթալ, մինչ միւսը կ'երթայ թլփատուածներուն, եթէ երկու կողմերն ալ համոզուին որ զիմացինն ալ ճիշդ իրեն չափ անկեղծութեամբ Քրիստոսի ծառայի՝ որոշած է (Գաղ. Բ. 7—9): Եւ գործի զաշտին այսպիսի մէկ բաժանումը չ'աւերեր եկեղեցւոյն միութիւնը, ընդհանրական աւելի կը շեշտէ. որովհետեւ, զոր օրինակ մեծ գործարանի մը մէջ մինչև որ կանոնաւոր ծրագրի մը համեմատ գործերու բաժանում չ'ըլլայ, մեծ արդիւնաւորութիւն յառաջ չի գար:

Առաքելական եկեղեցւոյն միութիւնը պահպանող այդ մեծ անձերու օրինակը եթէ մեր աչքերուն առջեւ ըլլայ և մենք ալ անոնց հոգիովը գործենք, այսօր ալ եկեղեցական միութիւնն ապահովել ու պահպանել ղոռար պիտի չ'ըլլայ: Արդէն ճշմարիտ սիրոյ մէկ տարրն ալ ոչ-էական կէտերու մէջ իրարու հանդէպ թոյլատու գտնուիլն է և իրարու գաղափարները յարգել, ու եթէ տարբեր տեսակէտներ ալ գտնուին՝ զանոնք ներգաշնակութեան բերելով հաշտ ապրիլ: Եթէ ըսենք թէ թող միայն իմ խօսքս քալէ և ուրիշներ ինչ կ'ուզեն ըլլան, եկեղեցին չի միանար, կը բաժնուի, չի շինուիր, կը քանդուի: Այսօր մեր Սիւրիոյ Հայ Աւետ. եկեղեցիներէն շատերուն վիճակը ճիշդ այս չէ:

Ուրեմն կը տեսնենք թէ ինչ բաներու պիտի ուղղուին մեր ջանքն ու աղօթքը: Քանի որ մեր փափաքն է եկեղեցական ընդհանուր միութեան մը գոյանալը, մեր ձգտելու սոսիին բունը պիտի ըլլայ հոգեւոր ու բարոյական միութիւնը, երեւելի միութենէն առաջ աներեւոյթ միութիւն մը, քուէներու և եւեմտացոյցներու միացումէն սոսի սիրտներուն միացումը: Իսկ այս «Հոգաւոր միաբանութիւնն» ըսել է, որ յա-

ռաջ կ'ուզայ իւրաքանչիւրիս անպայ-
ման աւ քաջարձակ կերպով հպատակե-
լովը Գլուխ եզոզ Բրիտանիան: Եկե-
ղեցեայ միութեան երաշխաւորութիւնն
իր Գլխուն մէկ ըլլալուն մէջն է, և
յայտնի է թէ այս մէկ Գլուխը չի կրը-
նար կենդանի և ամէն տեղ ներկայ Գը-
րիստոսէն ուրիշ մէկն ըլլալ: Ջանանք
որ ամէն մէկս այս միակ Գլուխին միա-
ցած ըլլանք կենսականօրէն և հնազան-
դութեամբ: քանզի եթէ Հօր Աստու-
ծոյ հետ և Անոր Որդւոյն Յիսուս Քրիս-
տոսի հետ հաղորդակցութիւն ունինք,
իրարու հետ ալ հաղորդակցութիւն
կ'ունենանք: Այն ատեն ամէն մէկս
աւելի զիւրաւ կրնանք մեր թերու-
թիւնները տեսնել, քանզի այն ատեն
աւելի խորունկ խոնարհամտութիւն մը
կ'ունենանք, նաև այն ատեն իրարու
տեսակէտներն աւելի կատարեալ կը
հասկընանք և իրարու շարժառիթներն
ալ աւելի ազդիղ դատել կը սորվինք:

Մի եզոզ ճշմարիտ Եկեղեցին անտե-
սանելի Եկեղեցին է, որ երկրի վրայ ու
երկնքի մէջ եզոզ բոլոր սուրբերուն
հոգեւոր հաղորդակցութիւնն ու միու-

թիւնն ըսել է: Ուրեմն տեղամըլլանք
«երկինքը գրեւած անդրանիկներուն
հանդիսաւոր ժողովին աւ եկեղեցիին»:
Իսկ այս կ'ըլլայ մեր մօտենալովը մի
միայն «Յիսուսի» որ նոր Ուխտին միջ-
նորդն է, ու սրսկելու Արիւնին» (Եբր.
ԺԲ. 23, 24,) որ մեզ ամէն մեղքէ կը
սրբէ:

Ինչպէս առաքեալը կը ցուցնէ, Առա-
նուած կանխաւ որոշած է «որպէսզի ժա-
մանակներուն լրանալուն տնտեսու-
թեանը մէջ ամէն բան բովանդակէ Գը-
րիստոսով, ինչ որ երկինքը եւ ինչ որ
երկրի վրայ կայ» (Եփես. Ա. 10): Ի-
րական միութիւնը Յիսուս Քրիստոսով
է. իրմէ դուրսը միութիւն փնտռել Աս-
տուծոյ նախասահմանութեան հակա-
ռակ քաշել է: Ուստի ջանանք և ազո-
թենք որ բոլոր հաւատացեալներ սոր-
վին Տէր Յիսուսի մէջ մնալ այնպէս
ինչպէս ճիշդը կը մնայ որթին վրայ.
այն ատեն եկեղեցիին միացումը լոկ
փափաք մը կամ երեւակայութիւն մը
չի մնար:

Քեաւայ

ԵՂԻԱ Ս. ԲԱՍՈՒՆԻ

Յունիար 19, 1932

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

7

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՂՈՑԻՄՅԻ

Հանրաժանութ զէմք մըն ալ այս.
պատմական անձնաւորութիւն մը որ ապ-
րած է հայ ազգի կրօնական պատմու-
թեան ամէնէն ճակատագրական մէկ շըր-
ջանին և իր հզօր ազդեցութեամբը ուղ-
ղութիւն տուած է թաւախող զէպքերու:

Յովսէփ Կաթողիկոս — ըսենք մէկ ան-
գամէն որ ամէն մարդ յիշէ զինքը — մեր
հայրապետն էր Վարդանանց պատերազ-
մի և նախնային զէպքերու շրջանին:

Հիմա, աւելի յատկանշական կը դառ-
նայ մեզի համար իր կեանքն ու գոր-
ծունէութիւնը:

Աշակերտ ըլլալով անմահ Սահակ
Պարթևի և Մեսրոպ Մաշթոցի, Յովսէփ
տոգորուած էր քրիստոնէական անմար
խանդով եւ խոտարարոյ աններողու-
թեամբ մը: Ս. Մեսրոպ իր կենդանու-
թեանը յաջորդ նշանակած էր զայն եւ
հայ ժողովուրդը ընդառաջ երթալով ան-

զուգուական տեսանողին փափաքներուն, Յովսէփը բարձրացուցեր էր Հայրապետական աթոռ: Յովսէփ՝ պարզ և առաքելական դէմք մը, տարիներով կը պաշտօնավարէ իբրև հովուապետ, առանց օժման և տուուչութեան հանդէսներու և փառաբանութեան հետամուտ ըլլալու: Մեծ Վարդապետին նկարագրէն բազմազան գիծեր ունէր այն, անկեղծ, անպաճոյճ, եկեղեցին աւագակներու որջ մը դարձնողներու հանդէպ անողոք և խարազանող, որմէ դասեր կրնան քողել ներկայիս ինքզինքը Բերիստոսի պաշտօնեայ նկատողներ, որոնք մեծաշուքից ցոյցերու եւ ծափողջոյններու մէջ կը փնտռեն մեծութիւնը և իրենց իշխերու պսակումը:

Յովսէփի օրով Հայոց թագաւորութեան վերջ տրուած ըլլալով (432ին), Հայաստանի հայրապետական աթոռի ոյժն ալ բաժնուած էր օտար պետութեանց կողմէ նշանակուած ալլապի տեղապահներու և ազգընտիր կաթողիկոսներու միջև: Այնպէս որ, Յովսէփ կը վարէր, այդ օրեր, հոգևոր կամ կրօնական գործերը, իսկ քաղաքական մասը՝ Պարսից կողմէ նշանակուած Շմուէլ մը կամ Սուրմակ մը: Դէպքերու և մըտայնութեանց մէկ բարեբաւօտիկ փոփոխութեամբ, Սուրմակ մեռած եւ 444 թուականին, հայրապետութեան բոլոր գործերը յանձնուած էին Յովսէփի, որուն համամտութիւն յայտնած էր նաև պարսիկ երկրիս զիւանագիտութիւնը:

Ազգային կեանքի ղեկը բոլորովին իր ձեռքը առած, Ս. Յովսէփ, այդ տարին իսկ ժողով մը կը գումարէ Շահապիվան քաղաքի մէջ, ուր ներբայ կ'ըլլան 40 եպիսկոպոսներ, նախարարներ, զօրավետներ և վերապրող արքունի իշխաններ: Ժողովի օրակարգին կտրեւորագոյն հարցը կ'ըլլայ հայ եկեղեցիի ֆրիսուհեական կարգապահութիւնը, որովհետեւ Շմուէլի եւ Սուրմակի նման Պարսից

կողմէ նշանակուած հակաթոռներու միջոցով Հայ եկեղեցիի պարզ եւ առաքելական կեանքը անկարգութեան ենթարկուած և ազգին բարոյական կեանքըն ալ խոր ցնցումներու ազդեցութեան տակ կոշկոճուած էր: Կարգ մը աղանդներ ծնունդ առեր կամ օտարամուտ թիւր դաւանանքներ պատուաստուելէին, եկեղեցիի հարազատութիւնը խաթարելու աստիճան վտանգելով քրիստոնէական «հաւատամք»ի հանգանակը: Ասոնցմէ ամէնէն վտանգաւորն էր Մեսալիան աղանդը (Messaliens), որ Ասորիքէն անցած էր Հայաստան եւ որ հեթանոսական հաւատալիքներու խառնուրդ մըն էր պարզապէս:

Շահապիվանի ժողովը՝ կրօնական եւ բարոյական այդ սայթաքումներու համար շատ խիստ պատիժներ անօրինեց, հայ ազատանիները (նախարար, զօրական, իշխան) դրամական տուհաճի, իսկ՝ հասարակ ժողովուրդն ալ ծեծի դատապարտելով:

Յովսէփ կաթողիկոս, այս միջոցով, վերջ մը կը գնէ աջէն ու ձախէն յետամուտ ալլասերսը սովորութիւններու եւ հաւատալիքներու. բայց ուրիշ աւելի հաւոր վիշապ մը գլուխ բարձրացնելու կ'սկսի, անդարմանելի աղէտներու դուռ մը բանալով Հայոց քրիստոնէական կրօնի տեւականութեան առջև: Յազկերտ Բ. փառամուլ և նենգամիտ թագաւորը, պարսիկ պահը բարձրանալէ վերջ, սկսաւ քաղաքական յանցանք մը նկատել, անհատի մը քրիստոնեայ ըլլալը, որով Պարսիկները սկսան ընդհանուր հալածանքի մը ենթարկել բոլոր քրիստոնեայ ազգերը (Վիրք, Աղուանք, եւ այլն) և մասնաւորապէս հարստահարել Հայերը, որովհետեւ այս վերջինները ամէնէն զօրաւոր հաւաքական և ազգային կեանքը կը ներկայացնէին, պարսկական հովանաւորութեան ենթակայ երկիրներու մէջ: Պարսիկը քաջ գիտէր

որ, Հայը մեծ ազդեցութիւն ունի Վրացիին և Աղուանին վրայ, թէ՛ կըօնակէ քերթոյնին եւ օր մը՝ հաւանաբար պիտի միանար անոր, տապալելու համար պարտիկ նորահաստատ եւ անհանդուրժելի լուծը: Եթէ Պարսից այս վերջին մտաւ զխոսութիւնը չիրականացաւ եւ Հայն ու Յոյնը մինչեւ վերջ իրարու ֆեասող, անհաշտ դրացիներ մնացին, առոր հետեւանքը երկուքն ալ կրեցին, չարաչար ատեմելով դարե՛ր և դարե՛ր, որուն պատասխանատուութիւնը ճշդիւ, թեւրեւ չատ հեռունները տանէր մեզ:

Այսպէս՝ Յովսէփ Կաթողիկոս դէմ յանդիման դրուած էր պարսիկ անսիրտ հալածանքին, որ ամէն խարդաւանանք կիրարկելով, յաջողած էր հեպհետէ

պառակտել հայ ազգը, նախարարական մեծահամբաւ գերդաստան մը իր կողմը շահելով. նախարար մը, որ զրի ու զըրականութեան, ինչպէս նաեւ քրիստոնէութեան ծաւալման սատարած էր, անցեալի մէջ, մեծագոյն աստիճանով մը: Հարկ կա՞յ յիշելու անունը այդ նախարարին, որ այնքան ազմուկ հանեց եւ բազմաթիւ դատապարտողներու բոյլ մը ունեցաւ իրմէ վերջ եւ ի՞նչ օրերուն: Վասակ-Սիւնեաց իշխանն էր այն. մին Հայաստանի ամենահզօր աստիճանաւորներուն. որուն յանձնիր էին վերջերս, Հայաստանի մարզպանութիւնը, որն էր քաղաքական բարձրագոյն իշխանութիւնը:

Հալկպ

(Շար.)

ՌՇՏՈՒՆԻ

ՕՐՕՐՈՅԸ ԿԱՐՃ ԵԿԱԻ

Կիրակի օրն էր, Աթէնքի քէմբերէն Սինկրուի մէջ, հրաւերի մը ի պատասխան դպրոցին պզտիկ սրահէն ներս մտայ, Հոն հաւաքուած էին քառասունէ աւելի մանուկներ եւ տասնեակ մը մայրեր: Հանդէս մըն էր այս տեսակին մէջ հազուագիւտ: Գործի ձեռնարկեր էին հինգ քոյրեր, մեծագոյնը տասնը երեք տարեկան, զուակներն ընտանիքի մը՝ որ քանի մը օրէն Հայաստան պիտի մեկնէին: Չափահասներու օժանդակութիւնէն բոլորովին զերծ էին: Նպատակն էր իրենց մեկնումէն առաջ բոլոր ընկերներուն եւ ծանօթներուն սիրոյ վերջին ողջոյնը տալ:

Հանդէսին վարիչն էր տասնեակերեք տարեկան մեծագոյն աղջիկը: Իր կըրտսեր քոյրերը արտասանեցին ներշնչող կտորներ, իրենց կարողութեան չափով: Աշխատեցան երգել. եւ ներկայացումի նմանութեամբ գործունէութիւններ ջոյս տուին: Բոլորն ալ շատ թերի, սակայն ո՛րքան տպաւորիչ, մանաւանդ չափա-

հասներու վրայ: Դերերը մոռցած դերակատար մանուկներէն յափշտակուած էինք:

Վերջին տեսիլն էր: Եօթը տարեկան աղջիկ մը, մօր դերին մէջ, գիրկն ունէր իր պէպէկը և խեղճութենէ ընկճուած կ'օրօրէր զայն սրտածմլիկ հաւնակով մը: Մէյ մ'ալ հոռէն հրեշտակ մը երեցաւ իրեն եւ հարցուց թէ ի՞նչ կ'ուզէր որ տրուէր իրեն: «Ձաւկի» համար օրօրոց մը միայն», եղաւ բոլոր պատասխանը: Հրեշտակը կատարեց անոր փափաքը, տուաւ իրեն օրօրոց մը, եւ մայրը ուրախութեամբ առաւ զայն, ուղեց զնել իր պզտիկը անոր մէջ, բայց... պէպէկի հասակէն օրօրոցը կարճ եկաւ:

Եւ ես ինքզինքէս ելած կը գիտէի պզտիկներու անպիտակցարար ներկայացուցած այս պատկերը որ իրական մանրանկարն էր իրենց առօրեայ պարագաներուն: Հիմա ալ Հայաստան պիտի երթային՝ զատուած իրենց ծանօթ-

հերէն և բարեկամներէն: Ինչո՞ւ: Քանի որ հացերն թիչ, հագուստն խեղճ, տեղերն չեն և օրօրոցն կարճ կուգար: Նոր յոյսերով և նոր հաւատքով կը մեկնին աշպէս լման հացի, պարզուկ հագուստի և համեստ բնակարանի ի խնդիր: Եւ մինք տնձկանօք կ'սպասենք որ Մասուրի բարի Մանուկը օր մը վերջապէս հէք մանուկներուն աւելի երկայն օրօրոց մը տայ:

Փետ. 15, 1932 Ս. Գ. ՍԻԻԼԱՆԶԵԱՆ
Արհնի

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Կաթին մէջ գտնուող միքրոպները իննիսուս ինը առ հարիւր կրնան ջնջուիլ երբ ձայնի զօրաւոր և գերազոյն հոսանքներու ենթարկուի կաթը: Այս ալիքները կաթի բաղադրութեան ունէ փնտռումը չեն հասցնել: Ձայնի ալիքները կ'սպաննեն միքրոպները, որովհետեւ ասանք ինքնին տեսակ մը զօրութիւն են և ոյժ կը պարունակեն:

Նոր տեսակ մը օթոմօպիլ շինուեցաւ որ երեք անիւէ կը բաղկանայ և ժամը 85 մղոն արագութեամբ կ'արշաւէ:

Այն երախաները՝ որոնք սակրաթեքութիւն կոչուած (rickets) հիւանդութեան ենթարկուած են՝ կը բուժուին երբ երեք ամիս անդադար օրը 12 ժամ 115 վոլտ և 500 ուաթ էլեկտրական հոսանքի ենթարկուին:

Ելեկտրական փուռեր շինուած են, որոնք 3600 աստիճան տաքութիւն մ'ունին սանթիկրատով: Երբ փայտի կտոր մը անոր մէջ դրուի անմիջապէս կազի կը փոխուի, որ ոյժն ունի բոլոր փուռը օդը հանելու: Կարծրագոյն ժայռեր ասոր մէջ կը շոգիանան, որոնք՝ երբ դուրս կ'արձակուին՝ օդին մէջ կը վառին

ճերմակ բոց արտադրելով: Երկաթը 2400 աստիճան տաքութեան մէջ կը շոգիանայ, բայց օդի մէջ բնածուխի հետ խառնուելով քարալիտ կը կազմէ, քարալիտի վերածուելէ ետքն ալ փուռի մէջ մնալով մինչև 3600 աստիճան կը տաքանայ, այն ատեն կապոյտ և ճերմակ բոցի ձևով և ահագին գոռումով դուրս կ'ելլէ:

Գտնուած է որ լոլիկի բոյսը զգայուն յատկութիւններ ունի շնչահեղձ կազերու հանդէպ, այնպէս որ երբ տեղ մը հեղձուցիչ կազով մը վարակուած է անմիջապէս կը տեսնուի որ լոլիկի տերեւները կ'սկսին թօշնիլ: Մարդուն համար աննշմարելի այս վտանգաւոր կազերու գոյութիւնը լաւագոյնս մատնոյն է լոլիկի բոյսը:

Վերջնականօրէն փաստուեցաւ ճՃԻ և 87րդ տարրերու գիւտը: Վերջին տարիներուն անոնց հետքը նշմարուած էր, բայց կադելի չէր եղած զանազ գտնել: Այս տարի շնորհիւ փրօֆէսոր Ֆրէտ Սլիտոնի մանրակրկիտ հետախուզութիւններուն՝ անոնք գտնուեցան: ՃՃԻ-ը Alebamine և ճՃԻ-ը Virginium անուանուեցան: Աշխարհը կազմող 92 տարբեր տարրերուն բոլորն ալ իրենց քիմիական յատկութիւններով գտնուած եղան այս կերպով:

Պարսկաստանի մէջ կատարուած պեղումները կ'ապացուցանեն որ մարդս առէ 5000 տարի առաջ ձի հեծած է: Ոսկորէ առարկաներու վրայ ձիու վրայ հեծած մարդերու քանդակուած պատկերները գտնուած են, որ իւր տեսակին մէջ ամէնէն հինն է աշխարհի վրայ: Այս քանդակուած պատկերները, որ 3100 Ն. Ք. թուականէն են, գտնուած են Եւֆրատի մայրաքաղաքը Շուշայի մէջ, որ շատերու կողմէ կը կարծուի թէ ամէնէն հին քաղաքը եղած է աշխարհի վրայ:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԳԱԶՈՒԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՉԵՌՆԱՐԿ ՄԸ

1928 ի վերջերը Սուրիացիներէ, Հայերէ, Ֆրանսացիներէ, Տանիմարցիներէ, Անգլիացիներէ, Զուիցերացիներէ և Ամերիկացիներէ բաղկացած 20 հոգիոց խումբ մը Պէյրուսի մէջ գումարում մը ունեցած են և խորհրդաւորապէս քաղաքին բարոյական կեանքին և մասնաւորապէս պոռնկութեան ծաւալման դէմ միջոցներ ձեռք առնելու մասին:

Բարեսէր անձի մը նիւթական նուէրովը գործը սկսած են, և առաջին առթիւ հանրատան մուտքերէն մէկուն մօտ վարձած են սենեակ մը, որ կոչուած է «փարոս» և իբր այդ ճանչցուած հանրութենէն, ինչպէս որ կ'իմանամ Պուրճի Առաքելութեան և Գոսոյ Տան Ա. և Բ. տաբեկան տեղեկագրէն, որմէ օրինակ մը ինձ զրկել հաճած էր Վեր. Ե. Հատիտեան:

«Փարոս» 1929 Մարտ 1-1930 Մարտ 1 ի միջոցին 282 գիշերներ բաց փնացած է, ուր յաճախած են միջին հաշուով օրական 133 հոգի, որոնք մեծապէս օգտուած են «Փարոս»-ի վարիչ Տիար Հ. Ս. Շարթունիէն:

Սենեակին մէջ գրուած են յարմար բառեր կամ համարներ Ա. Գրքէն և Գուրանէն, Արաբերէն, Ֆրանսերէն և Հայերէն լեզուներով: 51 հոգի ուխտած են մաքուր և ժառկալ կեանք մը ապրիլ:

Կազմուած է տիկնանց յանձնախումբ մը, որ ձիւնիյէի մօտ յարմար տուն մը վարձելով գայն կոչած է Գոսոյ Տուն, աւր աղջիկներ բնակած են կարճ կամ երկարատեան: Անոնցմէ ոմանք ամուսնացած են, ոմանք գործի մտած և ոմանք ալ իրենց ազգականներուն քով վերադարձած են:

Յանձնախումբը՝ երկուորդ տարին՝ Անգլիոյ մէջ բարձր ուսում և կրթութիւն ստացած օրիորդ մը հրաւիրած է՝ Գոսոյ Տան գործերը վարելու համար: Օրիորդը հրաւէրը ընդունելով Պէյրուսի եկած է և զնահատելի ծառայութիւն մատուցած՝ տարիէ մ'ի վեր:

Յանձնախումբը նկատելով որ դատարկապորտ և վատ ընթացքի մէջ գլխունուող աղջիկներու թիւը հետզհետէ կը բազմանայ, նկատելով որ օրբանոցներէն ելած աղջիկներն են որ ամէնէն աւելի գիւրաւ կը փորձուին պոռնկութեան, որոշած է շուտով քաղաքին մէջէն յարմար շէնք մը վարձել՝ այդպիսիները կարճ կամ երկարատեան ընդունելու համար:

Յանձնախումբի անդամները պարբերաբար կ'այցելէն եղեր հիւանդանոցի մէջ գտնուող աղջիկները, Ս. Գրքէն պատմութիւններ կը կարդան և կը ջանան անոնց սրտին մէջ ստեղծել և արծարծել լաւ, բարձրագոյն բաներու փափաքն ու ոգին:

Երբ բարոյական անկումը երթալով կը մեծնայ, երբ չարիքը թեւ առած կը թռչի՝ խելով ըստմութիւն գոհեր, նման միջազգային կազմակերպութեան մը երեւան գալը ուրախալի է իսկապէս:

Կ'արժէ որ ամէն Հայ իր լուսմաները նուիրէ այս կազմակերպութեան և զօրավիզ հանդիսանայ անոր:

Տուէ՛ք, որպէսզի դժօխային կեանք վարողներ փրկուին, որպէսզի չարիքը խափանի, որպէսզի ցամքի, չորնայ ալը բազմապիսի զաղիր և անտաղարակ հիւանդութեանց: Տա՛նք:

Պէյրուս

ԵՐՈՒԱՆԴԻ. ԱՂԿԵԱՆ.

Փետր. 28, 1932

ՃԱՐՈՆՑԻՆ ԵՒ ԶԻՆԱՑԻՆ

Ճաբոն փոքր կղզիներու խումբ մէջ։ Այս միակ իրողութիւնը բանալին է երկիրը և ժողովուրդը հասկնալու։ Բուն Ճաբոնը, որ 147000 քառակուսի մղոն տարածութիւն ունի, Գալիֆօրնիայէ պզտիկ է, և որ՝ սակայն՝ 64 միլիոնէ աւելի ժողովուրդի հայրենիքն է։

Ճաբոնական կղզիները բնական հարստութիւններով օժտուած չեն։ Լեռնային են, բայց գրեթէ զուրկ՝ հանքերէ։ Հաւաքեղեցիկ են, բայց սնունդի արտադրութեան համար բաւականաչափ հերկելի հող չունին։ Ճաբոն ծովային սննդեղէնի հարստութեամբ օրհնուած է, բայց մակընթացային մեծ ալիքներով, հեղեղներով, Թայֆունկ (աիփոն) կոչուած սարսափելի հովերով, մանաւանդ երկրաշարժներով ալանիծուած է։

Ճաբոնական փոքր փայտաշէն տուները արուեստագործութեան զոհարներ և պարզութեան տիպարներ են։ պտըլիկ, սիրուն, նրբաճաշակ և պեղեցիկ են։ Բայց մէկ վայրկեանի մէջ բոլորը աւերակոյտի կը վերածուին։

Ճաբոնցիներ իր երկրին ամէն մէկ մասնաշափը իր արիւնտմը ու քրտինքով թրջած է՝ ոչ թէ ներգելով կամ ժպտելով Զինացիի պէս, այլ դառնութեամբ, գրեթէ յուսահատօրէն։ Ապա հանդարտ կերպով կը գործէ բազմապաշտօրէն իր Կայսրը փառաւորելու, Ճաբոնը ազգերու մեծագոյնը ընելու։

1923 Սեպ. 1ին առաւել ժամը 11.30ին Թաիֆուն կը գտնուէի, որ սեւեռականին պէս թուխ ամպերու տակ թաց, մութ և գրեթէ տաք էր։ Կեանքը

քը կը շարժէր ամէն կողմ։ Ընթերցարաններու մէջ հարկւրաւոր երիտասարդներ կը կարդային, քանզի ամէն Ճաբոնցի կը կարդայ։ Քիչերը կը ժպտէին, քանզի Ճաբոնցիները անպէտ կերպով չեն ժպտիր։ Կէսօրէ երկու վայրկեան առաջ ամէն բան վերջացաւ։ Թաիֆուն կործանեցաւ և Եռքոհամաամայացաւ։ Յիսուն տարուան հարստութիւնը մի քանի երկվայրկեանի մէջ փճացաւ։ Ճաբոն առաջնակարգ պետութեան մը երկրորդականի մը վերածուեցաւ։ Այդ օրուան գիշերը ծնողները իրենց պաւակներուն և զաւակները իրենց ծնողներուն անունները կը կանչէին, զիրար գտնելու համար։ Բայց անկարգութիւն և կողոպուտ չըկար, քանզի Ճաբոնցիները երբեք ութեան, պարտութեան և մութի մէջ կարգապահութեան վարժուած էր։

Ճաբոնցիներ հետեւեալ առաւել սկըտաւ վերաշինել, և այսօր Թաիֆուն իր կրանիթէ և պողպատէ բարձր շէնքերով, առեւտրական կեանքով լեցուն մեծ վաճառատուններով Սաիոյ ամէնէն արդիական քաղաքն է։

Ճաբոնցիները և Զինացիները շատ մը կերպերով թէպէտ իրարու նման կը թուին մեզի, սակայն իրականին մէջ իրարմէ շատ կը տարբերին։ Ճաբոնի մէջ օղորտական դասակարգի բանակի մէջ ծառայողները փառքիարժանացած են, մինչդեռ Զինու մէջ զինուորը անարգուած է իբր ընկերութեան ստորին դասակարգին պատկանող մը։

Զինացիներ իր երկրին, անոք բնական հարստութեան, անսահման մարդկային ոյժին, զօրաւոր և փառաւոր երկար պատմութեան վրայ նայելով աշխարհին մը դառնայաճախ գրգռուած բայց միշտ վստահ գէմքով մը։ Ի՞նչ կ'ըլլայ մեթէ մէկը Զինու մէկ մասը գրաւէ։

* Այս յօդուածը գրուած է ձորճ Սոքուլօքի կողմէ, ընդ ետք Թայֆունի մէջ։ Յօդուածագիրը 14 տարիներէ ի վեր խմբագիր և թերթերու թղթակից եղած է Զինի եւ Ճաբոնի մէջ։

տակաւին հազարներ մղոններ չինա-
կան են: Ի՞նչ կ'ըլլայ եթէ մէկը Ձինը
նուաճէ: Անիկայ հարիւր միլիոնաւոր
Ձինացիներու ծովու մը մէջ պիտի խեղ-
դուի: Ծաբոնցիք տարբեր են: Անոնք
միայն իրենց փոքր կղզիները ունին:
Անոնց համար միայն գործ, բախտ, հայ-
րենիքի ուէրը և կարգապահութիւն կան:

Ծաբոն իբր արգիւտական պետութիւն
իր դիրքը կը պարտի իր ռազմական ոյ-
ժին և հնարամտութեան: Ծաբոն ԷՕ
տարի առաջ կղզեխումբի մ'անձանօթ
մէկ թագաւորութիւնն էր: Գոմոտոր ֆէ-
րիի Ծաբոնական ջորեքը մոնեղէն հաքը
այդ երկիրը գինեւորական ոյժով աշ-
խարհի առջեւ բացուեցաւ: Ծաբոն ա-
ւատապետութիւնը ջնջեց եւ մեծ ազգ
մ'ըլլաւ որոշեց: Այս փափաքը իրագոր-
ծելու համար Ծաբոն ծովային և ցամա-
քային ոյժ ունեղծեց, որ եղաւ իր գա-
ղափարականը: 1895ին Ձինը պարտու-
թեան մատնեց, 1901ին Պոքսըր շարժու-
մին դէմ գինեւոր զրկեց Ձին՝ իբր հա-
ւասարապատիւ եւրոպական ազգերու,
1902ին Մեծն Բրիտանիոյ դաշնակիցը ե-
ղաւ, 1905ին Ռուսիոյ յաղթեց: 1910ին
Գորէան իրեն կցեց, 1914ին Համաձայ-
նական պետութեանց դաշնակիցը եղաւ,
1915ին՝ Փարսիի Հաշտութեան Ժողովին
մէջ՝ հինգ մեծ ոյժերէն մէկը եղաւ:

Ծաբոնցիները ուշիմ կամ թափան-
ցող միտք ունեցող ժողովուրդ մը չեն՝
հակառակ այս նիւթին շուրջ վիպային
բաներ պրօւած ըլլալուն: Ժողով-
ներու մէջ ընդհանրապէս անոնք կը
կորոնցնեն. անոնք պէտք եղածէն ա-
ւելի հեղինակութեան ենթակայ են հի-
ացում պատճառող գործ կատարելու
համար, անոնք պէտք եղածէն աւելի
կարգապահութեան վարժուած են ան-
կախ խորհելու համար: Եթէ հարց մը
կազմակերպութեամբ և յամառ աշխա-
տանքով պիտի լուծուի՝ Ծաբոն կը յա-
ջողի: Բայց եթէ ան պիտի լուծուի իկերճ

յայտարարութեամբ, հռետորութեամբ,
մտային արագաշարժութեամբ և ինք-
նատիպ երեակայութեամբ՝ Ծաբոն սո-
վորաբար կը ձախողի: Ասոր հետեւան-
քը ըլլալով ժողովուրդը ընդհանրապէս
կը վստահի գինեւորականներուն որոնք
շոշափելի արդիւնքներ տուած են, և
չի վստահիր քաղաքագէտներուն ու-
րոնք պարապ պայուսակով հա կուգան:

Միջազգային յարաբերութեանց մէջ
ճաբոնցին չ'ախորժիր զանազանսիլ իբր
տարբեր ժողովուրդ մը, իբր պաշտպա-
նութիւն կամ մասնաւոր վերաբերում
պահանջող մէկը: Ասիացին ա'լ ձանձ-
րացած է լսելէ՝ թէ Նորտիկ ցեղը (Հիւ-
սիսային Եւրոպական կամ Տեւտոն-
եան) մարդկութեան աստուածացուի
է, թէ Մ. Նահանգները Աստուծոյ սկա-
հական երկիրն է: Ծաբոնցին երբոր
օտարի մը մէջ այսպիսի մտայնութիւն
մը կը տեսնէ, անմիջապէս պաշտպա-
նողականի կը դիմէ ապացուցանելու իր
երկրին կատարելութիւնը:

Մի քանի տասնեակներէ ի վեր Ծա-
բոնցիք աշխատած են ամէն կերպով
Արեւմտցիին նմանիլ: Անոնք գործի
մէջ արեւմտեան հագուստ կը հագնին,
Ձինացիներէն շատ աւելի սպասօրէն
արեւմտեան կերակուր կը գործածեն,
իրենց առեւտրական և ճարտարա-
րուեստական գործերը արեւմտեան կեր-
պով կը վարեն, անոնց երիտասարդները
արեւմտեան խաղեր կը խաղան: Բայց
Ծաբոնցին հիմա ինքնուրոյն ունձնա-
րութիւն կազմելու հետամտաւ ըլլալ կը
թուի, որուն ինչ ըլլալիքը կռահել զըժ-
ուար է: Թերեւս պողպատի, ելեկտր-
ականութեան և Կոնփուկիոսի, Մար-
քսեան տնտեսութեան և Շինթոյի,
անհատական ազատութեան և պարսա-
ղըրեալ ընկերային կարգապահութեան
խառնուրդ մ'ըլլայ:

Ծաբոն Ձինէն շատ աւելի առեղ-
ծուածային է: Ձին իր ողողումներուն

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՕՏԱՐ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷ-
ՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐՈՒ ՄԷՋ

2.

«Աքսիոն Բրէթիէն Ան Օրիան» մի-
սիոնարական ընկերութիւնը, որուն
կեդրոնն է Սթրազպուրկ քաղաքը Աւ-
զասի մէջ, Հալէպ քաղաքը իրեն հա-
մար ընդարձակ գործի դաշտ մ'ըրած է:
Ընկերութեան ներկայացուցիչն է Օր-
Հէտուիկ Պիւլ, բնիկ Լիթուանիացի և
նախկին Հիւլֆ'ս Պաշտ միսիոնարական
ընկերութեան միսիոնարուհիներէն, որ
պատերազմէն առաջ գործած է Խառնը
և Մարաշ: Կը խօսի սահուն թրքերէն,
վերջին տարիներս սորված է նաև հա-
յերէն գրել, կարգալի մանաւանդ խօսիլ:

Այս անխոնջ կիներ բարեսիրական
ընդարձակ գործ մը կը վարէ զրիթէ ա-
ռանձին. ասկէ հազիւ մի քանի ամիս-
ներ առաջ իրեն օգնելու համար Հալէպ
եկած է Տիար Խաչատուրեան անուն
երիտասարդ մը, որ «Աքսիոն Բրէ-
թիէն»ի ծախքով Ս. Գրքի գպրոց մը
աւարտած է:

Օր. Պիւլ 72 հայ որբեր կը խնամէ,
հայթայթելով անոնց հագուստեղէնն ու
ուտեստը: Ասոնք մասնաւոր շէնքի մը

յորձանքներուն մէջ կը ժպտի, և նոյ-
նիսկ օգնութեան համար աշխարհի
ձեռք երկարած ատեն ուրիշ աղգերու
վրայ կը խնդայ զանոնք ապուշ ոտ-
բաղասներ նկատելով: Բայց ծառնե-
ցին հեռու կը կենայ, հպարտ և վերա-
պահ, և կը վստահի միայն ինքնիրեն
վրայ և փոթորկոտ և չբարեկամ ծովէ
մը ինքզինքը դուրս քաշելու համար
անվերջանալիօրէն գործելու իր կարե-
ղութեան վրայ: ամի. Տ. Ճ. Խ.

մէջ չեն հաւաքուած, ալ իրինց մայ-
րերուն քովը մը մնան: Վեց տարիքը
լմեցնողները կը զրկուին դպրոց: Ս-
տոնցմէ 14ը կը զրկուի Էմմանուէլ Ա-
ւետ: Եկեղեցիի դպրոցը, 18ը Այնթապի
կրթատիրաց Վարժարանին, 4ը Պոյզ'
Հայ Սքուլ և երկուքը Ամերիկեան Աղջ-
կանց Բ. Վարժարանը: Մնացած 34ը
6 տարիքէն վար են: Իւրաքանչիւր ս-
շակերտին համար 500 դր. սուրի. (մօտ
4 տուար) դպրոցական թոշակ կը վճարէ:

Քէմբի մէջ մեծ աղջիկներու և կիներ-
ու համար երկու կարգերէ բաղկացեալ
դպրոց մը բացած է, շաբաթը չօրս ան-
գամ առտունները անոնք կը հաւաքուին
գրիկ կարգալ սորվելու համար, որպէս-
զի իրենց հոգևոր սնունդը սեղանի Ս.
Գրքէն կարենան առնել:

Մէյտանի, նորաշէն հայկական թա-
ղին մէջ, դարմանատուն մը բացած է,
ուր, շաբաթը երկու անգամ Տոքթ. Ծի-
պէճեան և Տոքթ. Ֆ. Յաջանեան հի-
ւանդներ կ'ընդունին: Մնայուն հի-
ւանդապահ օրիորդ մը ևս կը գործէ հոն:
Ամէն հիւանդ պարտաւոր է մէկ ֆրանկ
վճարելով տոմս մը ճարել զարմանա-
տուն մտնելու համար, և նաև պէտք է
իր կարողութեան համեմատ վճարել
զարմանաւորի համար: Ուրբաթ օրերը
հոս կաթ կը տրուի մանուկներու հա-
մար: Դարմանատան մէջ հոգեւոր ժո-
ղովներ կը կատարուին առաջնորդու-
թեամբ Կ. Ալթունճեանի: Օր. Պիւլ
ամէն հինգշաբթի կէսօրէ ետքը ժամը
2-4ին դարմանատան մէջ կ'ընդունի այն
բուրբ կիները, որոնք պէտք ունին կս-
րեկցութեան, նիւթական և հոգեւոր
օգնութեան: Յառաջիկայ ամառ կը
յուսայ որ Օր. Օսթերման Հալէպ պի-
տի գայ հիւանդներու ծառայելու:

Վերջին երկու ամառներուն Օր.

Պիւլ Ֆիլիզապէս շատ տկարները յարմար վայրեր օգտախոսութեան տարածէ, հաւանական թաքստտէ վանքերը պահելու համար: Անցեալ ամառ այս կարգադրութենէն մեծապէս օգտուած են պղտիկ և մեծ 90ի մօտ անձեր:

Կիւերու համար ընդարձակ չափով ձեռագործի ճիւղ մ'ալ կայ: 150-200 կիւեր կ'օգտուին այս կերպով: Անոնց արագորած կտորները կ'սպառին Ալպա-սի, Հօլանտայի, Զուիցերիոյ և Դերմանիոյ մէջ: Այս գործը, ինչպէս որ կ'ըսէ Օր. Հ. Պիւլ, յառաջ կը տարուի ոչ թէ շահագրտական այլ գաւառ միսիոնարական ոգիով: 25 ի չափ ստայնանկներ կ'արտադրեն կապերտ, մետաքսէ և մանածէ հիւսուածեղէններ: Ասոնք Հալէպի մէջ կը ծախուին կամ կանանց ձեռագործի ճիւղին մէջ կը գործածուին:

Այս բոլորէն զատ Օր. Պիւլ նիւթապէս օգնած է եկեղեցական եւ դպրոցական շէնքերու շինութեանց, ուսուցչական թոշակներու, շատ մը ընտանիքներու բնակարաններու շինութեան:

Պէտք է աւելցնել նաեւ որ թէ՛ Հալէպ և թէ՛ շրջակայքը հարիւրաւոր կարօտ Հայերուն հագստեղէն բաշխուած է:

ՔՈՔԻՆԻՈՅ Հայ Աւետ. Եկեղեցիի հովիւը, Պատ. Գ. Տէմիրճեան կը գրէ.

Քոքինիոյ Ք. Զ. Երկսեռ Միութեան վերջացող տարուան վերջին երկու լըսարանները յաջողութեամբ սարգսեցան: Առաջին լսարանին բանախօսեց Պատ. Կրիստոս Տէմիրճեան Խաչակրութիւնք և Կիրիկիոյ Հայերը նիւթին շուրջ: Իսկ երկրորդին Միութեան անդամները բեմադրեցին, Կորսուած Աստղը, խիստ շահեկան և բարոյաշունջ Ծընունդի տրամ մը: Վերջերս Քոքինիոյ մէջ կազմուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան մասնաճիւղ մը: Սոյն հաւաքոյթին նախագահեց Տօքթօր Կաշեան և Նպատա-

կայարմար բանախօսութիւն մը ըրաւ Հ. Բ. Ը. Միութեան գործիչ եւ պատուիրակ Տիար Օննիկ Թաղէոսեան:

Ամանորի և Սուրբ Ծնունդի քոթիւ հոգեշունչ պաշտամունքներ կատարուեցան Քոքինիոյ Հայ Աւետարանական Եկեղեցոյ մէջ: Ամանորի պաշտամունքին յաւուր պատշաճ պատգամներ խօսեցան Վեր. Յ. Ճէճիկեան հայրէն, Իսկ Պատ. Միհրան Րէնճիլիան Թրքերէն լեզուով: Ծնունդի պաշտամունքին խիստ հրահանգիչ և հոյակապ քարոզ մը տուաւ Փրօֆ. Լ. Լեւոնեան հայրէն լեզուով՝ նիւթ ունենալով մարդեղութիւնը: Վերոյիշիալ երկու պաշտամունքներու միջոցին հաւատացեալներու հոծ բազմութիւն մը լիովին ըմբռնեց քառացայն երգեր՝ զոր եկեղեցոյ երգիչ խումբը երգեց զիկավարութեամբ Տիկին Մեննուշ Թօփալեանի: Ըստ իր սովորութեան, այս տարի եւս Քոքինիոյ Հայ Աւետ. Եկեղեցին տարուան առաջին շաբաթը յատկացուց եօթնեակի պաշտամանց, ուր ներկայ հղան հաւատացեալներու աննախընթաց բազմութիւն մը՝ արտագեղ խանդավառութեամբ:

Եկեղեցոյ անդամները աւելի մօտէն եկեղեցիով հետաքրքրելու մտադրութեամբ, Քոքինիոյ Հայ Աւետ. Եկեղեցոյ հոգարարութիւնը ընտանեկան հաւաքոյթ մը կազմակերպեց եկեղեցոյ բարձր անհատներուն համար: Սոյն հաւաքոյթը տեղի ունեցաւ Յնվ. 10 ին եւ ի ներկայութեան շուրջ 300 հոգիներու: Ստեղծուեցաւ խիստ աքաւղ մթնոլորտ մը: Թէյէն յետոյ երգուեցան երգեր զանազան խումբերու կողմէ, եւ ի վերջոյ կարգաւ խօսեցան Տօքթ. Մարտին, Վեր. Սթամպոլլու-հան եւ Վեր. Ճէճիկեան: Թունվ. 24 ին Վեր. Հէնրի Րիկզ նոյն եկեղեցոյ մէջ քարոզեց հայերէն լեզուով մեծ հաճոյք պատճառելով ներկայներուն:

ԱնթիլիԱՍԻ մէջ Մարտ 7—14ին տեղի ունեցած է Եպիսկոպոսական ժողով նախագահութեամբ աթոռակից Կաթողիկոսներու և մասնակցութեամբ հինգ թեմակալ Եպիսկոպոսներու և Շահէ Սրբազանի: Պարզ նշանտուքի, դպրեւանքի մէջ առաւելապէս եկեղեցականներ պատրաստելու, թեմերու սահմաններուն մէջ փոփոխութեանց, միօրինակ կրթական ծրագիր մշակելու և այլն ազգային հարցերու շուրջ որոշումներ տրուած են, կ'ըսէ «Ազգակ»:

ՀԱԼԷՊԻ Մանչերու Բարձր Վարժարանը պիտի մասնակցի Պալատի Կաթողական համաժողովին որ տեղի պիտի ունենայ Մարտ 24-28ին, երկու պատուիրակներով, որք են՝ Լեւոն Ճանճյան, Վահան Բէթթէքլեան: Մր. Ա. Քարլթըն՝ դպրոցիս փոխ տնօրէնը՝ ասոնց պիտի ընկերանայ: «Անասուններու հանդէպ գութ» նիւթին շուրջ Քացուած մրցումին մէջ Ա. մրցանակը չահած է Յարութիւն Մըլըրլեան³ սուր. լիրա, Բ. մրցանակը՝ Հայկ Փոլատեան 2 սուր. լիրա, և Գ. մրցանակը 1 սուր. լիրա բաժնուած է Թորոս Շանլեանի և Եղուարդ Գարամանուկեանի միջև:

ԱՄԵՐԻԿԵԱՆ Ազգական Բարձր. Վարժարանի տնօրէնուհին Միս Փորմըն Մարտ 24ին քաղաքէս պիտի մեկնի 6-7 ամսուայ արձակուրդով մը: Արձակուրդը առաւելապէս պիտի անցընէ Անգլիա և Եգիպտոս: Անցեալ շաբաթ Էմֆանու-

էլ Աւետ. եկեղեցիին կողմէ Միս Փորմընի և Անտիոք հաստատուելու համար դացազ Մր. Էտքինսի ի պատիւ թէյասեղան մը տրուած է:

ՀԱԼԷՊԻ Հայ Առաջնորդարանի մէկ վիճակացոյցին համեմատ Հալէպ քաղաքի մէջ 1931 ի միջոցին ծնած են 610 մանչ և 584 աղջիկ (1194), մեռած են 244 արական և 235 իգական սեռէ (479). Հալէպի ենթակայ 23 վայրերու մէջ ծնած են 365 մանչ և 363 աղջիկ (728), մեռած են 128 արական և 140 իգական սեռէ (268): Ամուսնութիւններու թիւը եղած է Հալէպի մէջ 294, չրջակայքը՝ 138:

ՊԵՅՐՈՒԹԻ Մէջ Նոր Հայկական թաղ մը պիտի շինուի «Կիւլլապի Կիւլպէնկեան» անունով: Այս նպատակաւ Ներսէս Պէյ Կիւլպէնկեան Կիւլլապի Կիւլպէնկեան ֆոնտէն նուիրած է 15000 տուր:

ՆԵՐԳԱՂԹԻ Երկրորդ կարաւանը, 1248 հոգի, Փետր. 27 ին հասած է Բաթում: Շահվերտեանի յայտարարութեան համեմատ երրորդ կարաւանը պիտի բաղկանայ 1200 որակեալ բանւորներէ միայն: Այս կարաւանը Յունաստանէ պիտի մեկնի Մարտի վերջերը: Ասոնցմէ զատ կը տեղեկացուի թէ երկու կարաւաններ ևս պիտի կազմուին դարձեալ Մակեդոնիոյ և Թրակիոյ շրջաններէն:

ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԺՈՂՈՎԸ

Սուրբիոյ և Լիրանանի Հայ Աւետ. եկեղեցիներու Միութեան տարեկան ժողովը տեղի պիտի ունենայ Պէյրութ, Մարտ 30-Ապրիլ 4 ի միջոցին: Կը խնդրուի որ անդամները և պատուիրակները որոշեալ ժամանակին ներկայ ըլլան:

ՎԱՐՉՈՒԹԻԻՆ

FURST MNESS Ի ԱՌՈՂ-ՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն ու չինիչ ազդեցութեամբը,

աւտի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness'****EXTRACT OF COD LIVER OIL TONIC**Կաշուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան լիւղ (կենսահիւթ
«Ա» և «Բ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր գինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:Մեծապէս ԱՆՈՐԺԱՀԱՄ է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ՋՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՅԵՆ:**ՀԱԶ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ**

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթեր և
մեղմուլ:Բորբոսած եւ գրգռուած կոկորդի բաղանքներուն վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժախաւ եւ անուռ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المستول القس ق. هاروتونيان